

շակին մէկ մասը ասանկով մէկդի գնել ու շահեցնել . բայց իր ձեռքին աշխատանքովը ասորդ մարդուն բանը տարբեր է . վասն զի այսպիսւոյն համար օր կուգայ որ ոչ աշխատանք կ'ունենայ և ոչ վաստակ . ան ատեն ինչ պիտի ընէ , տարեկան տուրքը ուսկից պիտի վճարէ . երբոր ան տուրքը չվճարէ , ընկերութեան կանոնն է որ ան մարդուն ապահովուցած ստրկէն կ'առնէ . որով դրամագլուխը կը փճանայ : Իսկ է թէ արհեստաւորը այսպիսի վտանգի մէջ պիտի չդնէ ինքզինքը :

Փոխադարձ ընկերութիւններ ալ կան , որոնց անդամ գրուող մարդը շաբաթը կամ ամիսը անգամ մը այսչափ բան կը վճարէ , ու ընկերութեան պարտքն է անոր հիւանդութե , կարօտութեան ու ծերութեան ատենը ստրկով օգնել : Եւ այսպիսի ընկերութեանց վրայ ուրիշ ատեն երկար պիտի խօսինք . հոս այսչափ ըսենք որ ասոնք շատ օգտակար են , բայց ափսոս որ իրենց օգուտները որչափ որ կը յուսացուէր՝ չտեսնուեցան : Եւ զգի՜ր մէջ զարմանալի կերպով մը մէկէն ի մէկ շատցան ասոնք , բայց աղէկ ու հաստատուն հիման վրայ դրուած չըլլալուն համար՝ շատերը ցրուեցան , ու խեղճ ընկերները իրենց ստակը կորսնցնելով փճացան . և պատճառը ան էր որ այսպիսի ընկերութիւնները իրենց կարողութեանէն վեր խոստմունքներ ըրեր էին որ չկրցան կատարել : () Գէլ ըսուած ասանկ ընկերութիւն մը կար հոն , և ստորագրուող անձանց թիւը չորս հարիւր հազարի կը հասնէր . և սակայն չկրցաւ դիմանալ , ցրուեցաւ . որով շատ մարդիկ ալ պաղեցան ու այնպիսի ընկերութեանց մէջ մտնելէն զգուշացան :

Եւսոնցմով կ'իմացուի որ դիւրին բան չէ այսպիսի նիւթի մէջ լաւ , ապահով ու օգտակար ընկերութիւն մը գտնելը . և ան ամէն ընկերութիւններն որ յիշեցինք՝ աս մեծ պակասութիւնս ունին որ մէյմը որ անոնց ընկեր գրուեցար՝ ալ չես կրնար դուրս ելլել , կամ ստակդ բոլորովին և կամ ըստ մասին ետ առնուլ .

ուստի կամ ինչուան ետքը ընկերակցութեան մէջ մնալու է , և կամ ան ստրկէն յուսահատելու է . որով կ'իմացուի թէ արհեստաւոր կամ աղքատ մարդուն բանը չէ ասոնց անդամ գրուիլը , և ան ազատութիւնը որ պիտի ունենար իրեն հարկաւոր ապրուստին կամ ստրկին վրայ՝ կորսնցնելը :

Եւ իայն խնայութեան գանձարանն է որ մէկալ ընկերութեանց աս պակասութեանէն ազատ է . վասն զի ամէն մարդ կրնայ երբոր ուզէ ասոր մէջ մտնել , ընկեր գրուիլ , և երբոր ուզէ կրնայ ընկերութեանէն ելլել . քանի որ դրած դրամագլուխը գանձարանին մէջ է , շահ կը բերէ , կը շատնայ . ուզէ՞ ետ առնել , բաւական է որ երթայ ուզէ՞ մէկէն կ'առնու . չէ , ըսենք թէ ան կարօտութիւնն որ ունէր՝ անցաւ , կ'ուզէ նորէն գանձարանը դնել՝ մէկէն ընդունելի կ'ըլլայ խնդիրքը , և առանց ամենաւին մէկ մնաս մը կամ կորուստ մը ունենալու՝ նորէն իր արդեանցը պտուղը կը վայելէ :

Եւ այսպիսի ընկերութեան մը օգտակարութիւնը միայն հոս յիշեցնելէն ետքը , հետեւեալ յօդուածներով հաստատուելուն պատմութիւնը և գործադրելու միջոցները կը ստորագրենք :

Ով որ առանց նախատեսութեան կը քնանայ , առանց բան մը ունենալու կ'արթննայ :

Մէյմը տղաք չեն մտածեր գտնելը , մէյմըն ալ տղայամիտ մարդիկ :

Մարդ ըսելու մարդն ան է որ ըլլալու չարեաց նախատես կ'ըլլայ , ու երբոր չարիքը հասնի՝ օրով կը համբերէ ու կը յաղթէ :